ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

1. Սույն պայմանագրից բխող և դրա կապակցությամբ կողմերի միջև ծագած բոլոր վեճերի լուծումը հանձնվում է «ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (այսուհետ՝ Կենտրոն) հիմնադրամին: Արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառվում են Կենտրոնի կողմից հաստատված Արբիտրաժային կանոնները:
2. Վեճը լուծվելու է մեկ արբիտրի կողմից: Արբիտրաժի լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևանը: Արբիտրաժային համաձայնության և վեճի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
3. Կողմերի, Արբիտրաժային Տրիբունալի և Կենտրոնի միջև գրավոր փաստաթղթերի փոխանցումը և ծանուցումների իրականացումը կատարվում է էլեկտրոնային փոստի միջոցով՝ կողմերի նշած հասցեի միջոցով:
4. Կողմերը պարտավոր են Կենտրոնին հայտնել գործի քննության ընթացքում իրենց էլեկտրոնային փոստի փոփոխության կամ ծանուցումները այլ միջոցով իրականացնելու անհրաժեշտության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթղթերի փոխանցումը և ծանուցումների իրականացումը կատարվում է այն էլեկտրոնային հասցեով, որը նշված է պայմանագրում և համարվում է պատշաճ ծանուցում:
5. Արբիտրաժային Տրիբունալի կողմից ճանաչված կամ օրենքի ուժով կողմերի միջև կնքված պայմանագրի կամ դրա որևէ դրույթի անվավերությունը չի հանգեցնում սույն արբիտրաժային համաձայնության անվավերության:

Հասցե՝ Երևան, 0026, Արշակունյաց պող. 51
Հեռ.՝+374 (0)11 201 41051
Էլ.փոստ՝ info@amca.am կայք՝ www.amca.am